

ՄԱՑԵՆԱՇԱՐ “ՄԱՍԻՍ”, ԲԻՒ 4

# ԹԱԿԱԳԻՆ ՀԱՄԲՈՅՐ

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ 1 ԱՐԱՐ

Թարգմ. Գ. ԱՐԱՔՈՅԵԱՆ



1934  
Տպագրութիւն “ՄԱՍԻՍ”  
ՍՈՅԻՍ

891.71

P - 22

06 AUG 20

891.4

p-22

25 NOV 2011

ՄԱՏԵՆԱՇԱՐ “ՄԱՍԻՍ”, ԹԻՒ 4

\*\*\*\*\*

# ԹԱՆԿԱԳԻՆ ՀԱՄԲՈՅՔ

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ 1 ԱՐՍՐ

Թարգմ. Պ. ԱՐԱՔՍԵԱՆ



ՍՈՅԻՍ  
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ “ՄԱՍԻՍ”

1934

— 3 —

## ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

---

ԱՆԴՐԵՅ ՄԻԽԱՅԼՈՎԻՉ ՈՒՅՈԶԿԻՆ, Ճառայում է  
Նշանաւոր բանկում։  
ՄԱՐԻԱ ՊԵՏՐՈՎՆԱ, նորու կինը։  
ԻՎԱՆ ԻՎԱՆԻՉ ԲԻՐԻԻԼԿԻՆ, մասնաւոր բանկի կառավարիչ՝ մեծ գիրք ունեցող անձնաւորութիւն է։  
ՆԱՍՏԻԱ, Ռւազկինների աղախինը։

Գործողութիւնը կատարում է ամառը Ուսուշին-  
երի ամառանոցում։

Բեմը ներկայացնում է մի սենեակ ամառանոցում։  
Այ, ձախ եւ մեջտեղը դռներ խորհում պատուիան, աջ  
ձաղիկներ, ձախ սեղան. կարասիկը ամառնային։

### ՏԵՍԻԼ 1.

ՈՒՅՈԶ. — (բեմի լետերից). Նասակա՛, Նասակա՛,  
ո՞ւր էք կորել, ո՞ւր էք կորել, ո՞ւր էք կորել,  
Նասակա՛, Նասակա՛. վերցրէք իրերը, Նասակա՛։  
(Եթու ընկնելով). ոչ ոք չկայ, բոլորը սատկել են։  
Նասակա՛. Ում առա իրերը ջառափա՛. սա անտա-  
նելի է. (վայր է ձյում ձեռնից արկղները)։ Կոկորդս  
արաքուեց. Նասակա՛. (զանգահարում է)։ Նասակա՛.  
(վերացնում է երկրորդ զանգը եւ երկուսով զանգահա-  
րում)։ Նասակա՛, լեզուս պատուեցի՛. (զանգահարում  
է ականջի դեմ)։

### ՏԵՍԻԼ 2.

ՈՒՅՈԶԿԻՆ ԵՒ ՆԱՍՏԻԱ.

ՆԱՍՏԻԱ. — Աա՛, դուք արգեն բարեհաճել էք  
վերադառնալ, պարս՞ն։

ՈՒՅՈԶ. — Վերադարձել եմ, վազուց վերադարձել  
եմ. ամբազջ մի ժամ է ձեզ եմ կանչում, կոկորդս  
արաքուեց, լեզուս պատուեց։

ՆԱՍՏԻԱ. — Այդ ինչո՞ւ պարսն, ինչո՞ւ էիք  
դռուել, ես անա այսակող գոների յետեւն էի։

ՈՒՅՈԶ. — Ասացէք խնդրեմ. մեղասորը դար-  
ձեալ ես եմ. հասկացիր, երկու զանգ եմ փշրել,  
ձայնս եմ կորցրել... վերցրու իրերը։

ՆԱՍՏԻԱ. — Տեսէք, տեսէք ինչպէս է թափել  
և յետոյ ինձանից պիտի պահանջեն, ո՞վ է մեղա-  
սորը, ի հարկէ պարսնը։



ՈՒՅՈԶ. — Խնդրեմ թողնէք ձեր փիլիսոփաց յութիւնը, ու ֆշան նման յոդնել եմ. (ընկնում է այս եւ այն կողմբ):

ՆՈՍՏԻԱ. — Եթէ յադնել էք ուրեմի նստեցէք, ապա թէ ոչ վազում էք և գոսում կարծես հրդեհ է պատահել:

ՈՒՅՈԶ. — Խնդրեմ թողնէք ձեր նկատողութիւնները... (նստում է). Ու Փ, ինչ քաղցած եմ, ինչ քաղցած: Որտեղ է տիրուհին:

ՆՈՍՏԻԱ. — Գնացել են երաժշտութիւն լսելու,

ՈՒՅՈԶ. — Ինչպէ՞ս թէ երաժշտութիւն, ի՞նչ երաժշտութիւն:

ՆՈՍՏԻԱ. — Այսօր այգում երաժշտութիւնը նուագում է և ամբողջ այգին լուսաւորուած է. արդէն երկու ժամ է ինչ երաժշտութիւնը նուագում է: Այնքան բազմութիւն է որ ասեղ գցելու տեղ չկայ:

ՈՒՅՈԶ. — Այդ էր պակաս. ևս շան նման քաղցած եմ, իսկ կինս գնացել է երաժշտութիւն լսելու: Տուր ինձ ձաշել:

ՆՈՍՏԻԱ. — Առանց տիկնո՞ջ:

ՈՒՅՈԶ. — Քո գործը չէ:

ՆՈՍՏԻԱ. — Առանց տիկնո՞ջ:

ՈՒՅՈԶ. — Տուր ինձ ձաշ:

ՆՈՍՏԻԱ. — Այդ անկարելի է:

ՈՒՅՈԶ. — Ի՞նչ:

ՆՈՍՏԻԱ. — Ի հարկէ, այդ ինչպէս առանց տիկնոջ: Տիկինը գնացել է երաժշտութիւն լսելու իսկ դուք ուզում էք ձաշել:

ՈՒՅՈԶ. — Բայց չէ՞ որ ես քաղցած եմ, հասկանո՞ւմ ես դու վերջապէս, ես քաղցածեմ:

ՆՈՍՏԻԱ. — Դուք պարոն, աւելի լաւ կ'անէք եթէ ինքներդ գնայիք երաժշտութիւն լսելու:

ՈՒՅՈԶ. — Այդ ի՞նչ, դու ցնդել ես ի՞նչ է, կամ մի գուցէ չոգն է ազդել ուղեղիդ. — Ես քաղցած եմ, ուտել եմ ուղում, ոչ թէ երաժշտութիւն, հասկացար վերջապէս թէ ո՞չ:

ՆՈՍՏԻԱ. — Ի՞նչ կայ այստեղ չհասկանալու, չաս պարզ է: — ձշմարիտ, պարոն, աւելի լաւ է դնաք այդի: Գնացէք, գնացէք պարոն:

ՈՒՅՈԶ. — (Վեցնում է գլխարկը եւ փայտը). Ես այսօր կը ինելագարուեմ. — լաւ, շատ լաւ, ես կ'երթամ այդի երաժշտութիւն լսելու, բայց եթէ կէս ժամից յետոյ ճշշը պատրաստ չլինի այնպիսի երաժշտութիւն կը սարքեմ ձեր գլխին որ բոլորդ էլ գոհ լինէք:

ՆՈՍՏԻԱ. — Լաւ, լաւ պարոն, գնացէք, գնացէք:

ՈՒՅՈԶ. — Բաւական է, առանց այլեւայլի... այդ էր պակաս — վանտում է: (Գնում է եւ ապա վերադառնում): Դուք, նաստիա, ձեզ շատ էք թոյլ տալիս. դուք չպէտք է մոռանաք որ ես ձեր պարունան եմ, ձեր պարսնը այսինքն տիկնոջ ամուսինը, որը իմ կինս է, հասկանում էք, իմ կինս, իսկ ես նորա ամուսինը:

ՆՈՍՏԻԱ. — (Բանալով դոները). Համեցէք պարոն:

ՈՒՅՈԶ. — Աա՛, լեզուդ կարձացրի՛ք: (Գնում է):

### ՏԵՍԻԼ 3.

#### ՆՈՍՏԻԱՆ ՄԻԱՅՑՆԱԿ

ՆՈՍՏԻԱ. — Ասոցէք ինդրեմ ինչպէս է առքացի, կարծես պատերազմի դաշտում լինի: Այդ է ել վախեցայ, ինչպէս չէ: (Ճաղրելով): «Նաստիա ես ձեր պարսնն եմ, տիկնոջ ամուսինը, որ իմ կի-

նըս է»... խա՛, խա՛, խա՛... և ո՞րտեղի պառն է, մի ինչ որ գրասենեակում երեսուն և հինգ րութիւն ոսճիկ է սատանում. — այդ ինչ պարսն է. — եթէ տիկինը չլինէր, դու պարսն, հաւաքունու կ'ապրէիր և ոչ թէ ամառանոցում: (Նայում է պատուհանից). Գնաց, տեսէք, տեսէք, ինչպէ՛ս է տաքացած զնում... իսկ այստեղ պատուհանի մօտ ինչ լու է և ինչ անոյշ հօտ է բուրում. ամբողջ կեանքըս այսեղ կը նստէի, և զանազան բուաններ կը կարգայի՛... Այս, ինչ, լու է:

#### ՏԵՍԻԼ 4.

ՆԱՍՏԻԱ. ԵՒ ԲԻՐԻԿԻԼԻՆ,

ԲԻՐԻԿԻԼ. — (պատուհանից). Ճուտիկս, ախ դու իմ ձուտիկս, թոչնա՛կս:

ՆԱՍՏԻԱ. — Այս ի՞նչ կապիկ է:

ԲԻՐԻԿԻԼ. — Ի՞նչ, վախեցաք, իմ ձուտիկս: Միք վախենալ այդ ես եմ: (անհիշտանում է):

ՆԱՍՏԻԱ. — (պատուհանի մօտ), Ի՞նչ էք կոմհնում: Տանը ոչ ոք չկայ:

ԲԱԼՈՐԸ գնացել են... հեռացէ՛ք:

ԲԻՐԻԿԻԼ. — (մնում է, ձեռքին ցիլինտ եւ անձրեւանց: Սպիտակ զգեստով). Ճուտիկս, ախ դու իմ ձուտիկս, ինչ կրական է, ինչ կարիճ... իսկ աչքերը, ո՛ւֆ, ո՛ւֆ, ո՛ւֆ, շանթեր է արձակում...

ՆԱՍՏԻԱ. — Տանը ոչ ոք չկայ, տիկինը և պարսնը գնացել են, միաք բարեւու:

ԲԻՐԻԿԻԼ. — Գնացել են երաժշտութիւն լսելու: Շատ լու, ես շատ եմ սիրում երաժշտութիւնը:

ՆԱՍՏԻԱ. — Եթէ սիրում էք, ուրեմն դուք ևս գնացէք: միաք բարեւու:

ԲԻՐԻԿԻԼ. — Ոչինչ, ես այստեղ էլ կը լսեմ: Իսկ դու իմ թմբլիկս, միք լինի դէպի ինձ այդքան

խիստ: Միք դուրս անիլ ինձ պառակիս, ես բարի եմ... լուք ինձ փաղաքշեցէք, փայփայեցէք... ես փայփայանք սիրում եմ...

ՆԱՍՏԻԱ. — Փայփայանք սիրում էք, բայց տեսէք յանկարծ տիրունին կը գոյ և մեր երկուսի բանն էլ վատ կը լինի: Մնաք բարեւու գնացէք, գնացէք:

ԲԻՐԻԿԻԼ. — Ախ դու փիս, ես քեզանից փաղաքանք եմ խնդրում, իսկ դուք «գնացէք»:

ՆԱՍՏԻԱ. — Գնացէք պարսն, Ասառած վկայտիկինը կը գոյ և խայտառակութիւն կը լինի: Ուրիշների ամառանոցում չի կարելի ման գալ... գնացէք:

ԲԻՐԻԿԻԼ. — Սուս, ո՛ւֆ, չարաձնի, ես քեզանից փաղաքանք եմ խնդրում՝ իսկ դուք «գնացէք» և գնացէք»... Ճուտիկս, հոգեակս, մի համբ... միայն մի համբոյր: Միայն (բռնում է նորա):

ՆԱՍՏԻԱ. — Թողէք, պարսն, ձշմարիտ կը խայտառակուենք:

ԲԻՐԻԿԻԼ. — Դէ դէ դէ, բաւական է չարաձնի... ես փաղաքանք եմ ուզում, իսկ սա դուրս է անում: (բռնեց եւ համբուրեց) Ճուտիկս մի համբոյր: (բեմի լետելից լսում է Մարիա Պաւլովնայի ձայնը): Նստիփա՛, նաստիփա՛: Ուր ես կորել սեղանը պատրաստիր, հիւրեր են գալիս:

ՆԱՍՏԻԱ. — Գնացէք պարսն.. տիկինը գոլիս է խայտառակութիւն կը լինի:

ԲԻՐԻԿԻԼ. — Տիկինը, ախ սատանան տանի՛: Ուր է գլխարկս, ճուտիկս, ո՛ւր է գլխարկս:

ՆԱՍՏԻԱ. — Ուր էք գրել:

ԲԻՐԻԿԻԼ. — Ես ինչ դիտեմ, ինքդ ես թագցըրել...

ՆԱՍՏԻԱ. — Գնացէք, զնացէք, արկինը դալիս  
է, խայտառակութիւն կը լինի:

ԲԻՐԻՒԼ. — Ի՞նչ ես ինձ վախեցնում... ես ոհա  
այդաեղ կը ժանեմ: (զնում է ձախ):

ՆԱՍՏԻԱ. — Այդ ո՞ւր էք գնում, ո՞ւր էք զը-  
նում, այդ արկինոջ ննջարանն է:

ԲԻՐԻՒԼ. — Մի վախացնիլ ինձ, ես կը ժանեմ  
այսաեղ: (զնաց):

## ՏԵՍԻԼ 5.

ՆՈՅՆՔ ԵՒ ՄԱՐԻԱ. ՊԱՎԼՈՎՆԱ.

ՆԱՍՏԻԱ. (դուերի մօս), ԲԱԿՈՒԵցանք:

ՄԱՐ. ՊԱՎ.՝ Նաստիա, այդ ո՞ւր ես կորել,  
ոեղանը պատրաստիր, դիր ինքնաեռը, մեռք այսօր  
հիւրեր ունենք, մօտ բեր քաղցրաւենիքը և պէտք է  
ուղարկել դարձեալ ուրիշ բաներ գնելու:

ՆԱՍՏԻԱ. — Շատ բարի. (կողմը): Այս բողէիս,  
խայտառակութիւն կը լինի: Շատ բարի... բրո-  
նուեցանք:

ՄԱՐ. ՊԱՎ.՝ Այդ ի՞նչ է պատահել քեզ,  
Նաստիա, դու բոլորին գունատ ես:

ՆԱՍՏԻԱ. — Ես... ես ձշմարիտ ոչինչ... ձշմ-  
րիտ ես մեղաւոր չեմ... մեղաւոր չեմ:

ՄԱՐ. ՊԱՎ.՝ Նաստիա, դու ամանեղէ՞ն ես  
կոտրել խոստվանիր կոտրել հ՞ս... աչքերիցդ  
երեւում է որ կոտրել ես:

ՆԱՍՏԻԱ. — Ձշմարիտ, արկին, ես մեղաւոր  
չեմ:

ՄԱՐ. ՊԱՎ.՝ Հէնց այդպէս է — կոտրել ես.  
իմ տուալետի գաւաթը հօրեղքօրս ընծան... թան-  
կագին գաւաթը... այդ սարսափելի է'... (բաց է  
անում ննջարանի դռները եւ տեսնում է բիրիւլինին):  
ԱՌ, ո՞վ է այնտեղ, գողե՛ր... Օդնացէք...

ՆԱՍՏԻԱ. — Այ քեզ խայտառակութիւն:  
ԲԻՐԻՒԼ. — (մՏԵԼՈՎ). — Հանգստացէք, այդ  
ես եմ:

ՄԱՐ. ՊԱՎ.՝ Ո՞վ էք գուք: Ի՞նչո՞ւ համար էք  
իմ ննջարանում:

ԲԻՐԻՒԼ. — Ես ձշմարիտ... ես ոչինչ... ես  
միայն անցնում էի:

ՆԱՍՏԻԱ. — Ձշմարիտ ես մեղաւոր չեմ:  
ԲԻՐԻՒԼ. — Եւ ոչ էլ ես:

ՄԱՐ. ՊԱՎ.՝ Նաստիա, ո՞վ է սա':

ՆԱՍՏԻԱ. — Մերեցէ՛ք արկին, ձշմարիտ ես  
մեղաւոր չեմ:

ՄԱՐ. ՊԱՎ.՝ Նաստիա՛, ո՞վ է սա':

ԲԻՐԻՒԼ. — (Նասիալին զանազան նօաններ և  
անում):

ՆԱՍՏԻԱ. — Սա... սա... սա իմ նշանածն է:

ՄԱՐ. ՊԱՎ.՝ Նշանածը,

ԲԻՐԻՒԼ. — (կողմը). Մորթեց անիծեալը:

ՆԱՍՏԻԱ. — Ազնիւ խօսք... իմ նշանածն է:

Դուք որ գնացիք երաժշտութիւն լսելու, ահա Մի-  
միօն իվանովիչն էլ եկաւ այսաեղ, ես ասում է ձեռ  
պարսների մօտ եմ եկել, ես ասում է կտմենում  
եմ որ բոլորը իմանան թէ ես ըստօրինի նշանածդ  
եմ:

ՄԱՐ. ՊԱՎ.՝ Ուրեմն դուք Նաստիայի նը-  
շանածն է՛ք:

ԲԻՐԻՒԼ. — Այսինքն, ես մի կողմից: (կող-  
մը): Այ յիմար գրաւթիւն:

ՆԱՍՏԻԱ. — Դէ՛ լաւ Միմիօն իվանիչ, միք  
քաշուիլ: Սոքա առանց այն էլ վշտացած են... ես  
մերժեցի:

ՄԱՐ. ՊԱՎ.՝ Նա ձեզ մերժե՞լ է:

ԲԻՐԻՒԼ.՝ Մերժել է՛: Այս մերժել է՛. ես

ինդրեցի իսկ նա մերժեց, եռ... (հազում է). առաջին անգամն եմ այսպիսի յիմար դրութեան մէջ:

ՄԱՐ. ՊԱՎ. — Ետւ, լաւ, ես ձեզ կը հաշտեցնեմ: Ես չատ ուրախ եմ որ Նաստիայի նշանածը պատկառելի մարդ է և ոչ թէ երեխայ. Նա ձեզ հետ երջանիկ կը լինի:

ՆԱՍՏԻԱ. — Ուրեմն, տիկին, մեզ դուք ներում էք:

ԲԻԲԻԻԼ. — (կողմը), Եա ասում է «մեզ». այդ ապասփելի է:

ՄԱՐ. ՊԱՎ. — Ներում եմ և ինքս կը պատկեր ձեզ: Սորտ գէճքը ինձ դուր է գուլիս: — (նորան) դու չես խմում:

ԲԻԲԻԻԼ. — (ապօած). Այսինքն այդ ի՞նչպէս: ՆԱՍՏԻԱ. — Ինչ էք ասում, տիկին, սա ամեն ներին:

ՄԱՐ. ՊԱՎ. — Եւ չատ լաւ ես անում, այս ծառաների մէջ հազարագիւտ բան է:

ՆԱՍՏԻԱ. — Այս, տիկին, սա ամենեւին չի խմում... բոլորովին:

ԲԻԲԻԻԼ. — (ապօած). Ինձ հետ դուով է խօսում:

ՄԱՐ. ՊԱՎ. — Եա ուրախ եմ, ես մինչեւ անդամ սորան կը թսզնեմ մեզ մօտ: Մեզ վաղուց պէտք էր մի կրթուած ծառայ: Ահա ինչ, Սիմիոն, ոտաշին ծառայութեան համար օգնիր այսօր Նաստիային... դիր ինքնահօր, պատրաստիր սեղանը:

ԲԻԲԻԻԼ. — Ի՞նչ... ինքնահօր:

ՄԱՐ. ՊԱՎ. — Այս... քեզ սովորեցնելու կորիք չկայ: Դու երեւի ծառայել ես բորձը ընտանիքներում: Ում մօտ ես ծառայել:

ԲԻԲԻԻԼ. — Ե՞ս, ո՞ւմ մօտ:

ՄԱՐ. ՊԱՎ. — Դու... ինչ ագէտն ես...

ՅԻԲԻԻԼ. — Ես ոչ սքի մօտ չեմ ծառայել, ես... ՆԱՍՏԻԱ. — Սիմիոն իվանիչ, ինչո՞ւ էք շփոթւում: Սա, տիկին, ժողովարանումն է ծառայել... անգլիական ժողովարանում:

ՄԱՐ. ՊԱՎ. — Ո՛ւ, չատ գեղեցիկ: Այդ լաւ հիմնարկութիւն է: Դէ, իսկ այժմ գնացէք և ձեր գործը կատարեցէք... ալս, այս, նաստիա, առոր սորան պարոնի հին ֆրակը: Դու Սիմիոն այսօր կը ծառայես մեզ ֆրակով... մենք հիւրեր ունինք... նաստիա, առոր սորան նմանապէս և սպիտակ ձեռնոցները... պարոնի թղթարկզի մէջն է... այժմ զնոտ, նաստիան քեզ ըուլորը ցոյց կը տայ:

ԲԻԲԻԻԼ. — (կողմը) Ես պատրաստ եմ գետինը մանել:

ՆԱՍՏԻԱ. — Դէ Սիմիոն իվանիչ գնացէք:

ԲԻԲԻԻԼ. — Ո՞ւր: Ինչո՞ւ համար:

ՆԱՍՏԻԱ. — Խանանոց. ինքնահօր գնելու... դէ շարժուեցէք...

ԲԻԲԻԻԼ. — Գնում եմ... (կողմը). Կը փախչեմ, անպատճառ կը փախչեմ... (զնում է աջ):

## ՏԵՍԻԼ 6.

ՄԱՐ. ՊԱՎ. — (միայնակ) Ախ ինչպէս ուրոխ եմ նաստիայի փախարէն: Նորտ գէճքը ինձ չատ է գուր գոլիս, այնպէս համեստ է, այնպէս բորի, իսկ գլխուուրն է պատկառելի մարդ է, գիտէ ծառայել և ծառայել է Անգլիական ժողովարանում:

## ՏԵՍԻԼ 7.

ՄԱՐԻԱ. ՊԱՎ. Եի ՈՒՅՈԶԿԻՆ:

ՈՒՅՈԶ. — (մտնելով) Դու արգէն տանն ե՞ս, իսկ ես քեզ այդումն էի փնտուամ. մեզ մօտ հիւրեր են գոլիս. Պերեպեօլինը իւր կնոջ Տես և կուրոչինը, դու կարգադրել ե՞ս:

ՄԱՐ. ՊԱՎ. — Հանգիստ եղէք խնդրեմ, այդ  
ձեր գործը չէ բոլորը պատրաստ կը լինի առանց  
ձեր օգնութեան: Այս այս, նախազգուշացնում եմ  
ձեզ, մեզ այսօր կը ծառայէ նոր ծառան:

ՈՒՅՈԶ. — Ծառայ, այդ ի՞նչ նորութիւն է:

ՄԱՐ. ՊԱՎ. — Խնդրեմ առանց յանդիմանու-  
թեան, նա նաստիայի նշանածն է: Ես նորան վեր-  
ցրի մեզ մօտ և նա այսօրուայ հիւրերին կը ծառա-  
յէ:

ՈՒՅՈԶ. — Այդ է պակաս, նոր ծախսեր:

ՄԱՐ. ՊԱՎ. — Ձեր ոսձիկից չէ, ձեր ստացած  
35 բուրլին մի նոր գլխարկի գին է միայն:

ՈՒՅՈԶ. — Ես կարծեմ մեզաւոր չեմ որ ստա-  
նում եմ 35 բուրլի:

ՄԱՐ. ՊԱՎ. — Ոչ, մեզաւոր չք: Դուք չեիք  
կամենում խոնարհութիւն ցոյց տալ ձեր Մեծաւո-  
րին: Մարդկանց հետ չէք իմանում վարուել: Ին-  
չո՞ւ մինչեւ այժմ գուք չեք ծանօթացրել ինձ ձեր  
կառավարչի հետ: Ինչո՞ւ գուք նորան մեզ մօտ չեք  
հրաւիրում, ինչո՞ւ:

ՈՒՅՈԶ. — Որովհետեւ իվան իվանիչը ոչ մի  
տեղ չէ լինում: Բիրիւլկինը խորշում է նասարա-  
կութիւնից և ծանօթութիւնից:

ՄԱՐ. ՊԱՎ. — Դատարկ բան է, այդ նշանա-  
կութիւն չունի: Այս բոսէիս կը գրեմ մի հրաւէր  
Բիրիւլկինին և կ'ուզարկեմ Սիմիօնի ձեռքով, իսկ  
գուք գնացէք քաղցրաւենիքի յետեւից, գոնէ մի  
բանով պէտքական եղէք:

ՈՒՅՈԶ. — Քո կարծիքով ուրեմն ես երբեք և  
ոչ մի բանի պէտք չեմ, գու ինձ ստորնացնում ես  
միայն այն պատճառով որ ես 35 բուրլի եմ ստա-  
նում... այդ լու չէ:

ՄԱՐ. ՊԱՎ. — Ինչպէս...

ՈՒՅՈԶ. — Գնում եմ, գնում... ի՞նչ տեսակ  
քաղցրաւենիք գնեմ:

ՄԱՐ. ՊԱՎ. — Կեռա:

ՈՒՅՈԶ. — Կարիզներո՞վ:

ՄԱՐ. ՊԱՎ. — Յիմար:

ՈՒՅՈԶ. — Ես լսում եմ այն պատճառով որ 35  
բուրլի եմ ստանում:

## ՏԵՍԻԼ 8.

ՄԱՐԻԱ. ՊԱՎ. (ԱԹԱՆՉԻՇ)

ՄԱՐ. ՊԱՎ. — Կը գրեմ Բիրիւլկինին մի հը-  
րաւիրատամա, թող տեսնէ մենք ինչպէս ենք ապ-  
րում և հաւատացած եմ որ ընթրիքից յետոյ նա  
կ'աւելացնէ ամուսնուս ոսձիկը:

## ՏԵՍԻԼ 9.

ՄԱՐԻԱ. ՊԱՎ. Եհ ԲԻՐԻՒԼԿԻՇ

ԲԻՐԻՒԼԿ. — Ոչ մի հնարք չկայ փախչելու,  
այն անպիտան աղջիկը հանեց վրայիցս զգեստս,  
հագցրեց ուժով ֆրակը և ոչինչ չէ ուզում լսել:  
Երեք բուրլին չվերցրեց, բայց կը փախչեմ, ան-  
պատճառ կը փախչեմ...

ՄԱՐ. ՊԱՎ. — Ա՛, գու տրդէն պատրաստ ե՞ս...  
թող մի հայեմ լա՞ւ է նստած:

ԲԻՐԻՒԼԿ. — Նստած է: (Կողմը) կողքերք կը  
փշուի:

ՄԱՐ. ՊԱՎ. — Սակայն Սիմիօն շտապեցէք,  
պէտք է սեղանը պատրաստել... դիր ահա այստեղ,  
իսկ ծաղիկները, այնտեղ:

ԲԻՐԻՒԼԿ. — Որտե՞զ, ինչո՞ւ:

ՄԱՐ. ՊԱՎ. — Պատշգամբը, իսկ սեղանը այս-  
տեղ:

ԲԻՐԻՒԼԿ. — Որտե՞զ:

ՄԱՐ. ՊԱՎ. — Սիր ինչ ապսուշն է: Այսաւել, դէ  
շարժուեցէք, դուք ուղղակի փալաս էք:

ԲԻԲԻՒԼ. — Փալաս. (կողմը): Ես չգիտեմ ձըշ-  
մարիտ ինչ անեմ:

ՄԱՐ. ՊԱՎ. — Է, ինչ էք բերանդ բաց արել և  
կանգնել փայտի կառի նման—վերցրէք ծաղիկնե-  
րը:

ԲԻԲԻՒԼ. — (վերցնում եւ վայր է ձգում ծաղիկ-  
ներից մեկը): Թու, ստանան տա՞րի:

ՄԱՐ. ՊԱՎ. — Այդ ի՞նչ արիք, ի՞նչ արիք իմ  
սիրած ծաղիկը: այդ անտանելի է, անտանելի  
ինչո՞ւ էք այդպէս բռնել: գրէք յատակի վրայ:

ԲԻԲԻՒԼ. — (Վայր ձգելով բոլոր ծաղիկները):  
Թի՛ւ գետինը մանէք:

ՄԱՐ. ՊԱՎ. — Սիրիօն Դուք ինելագարուել էք:  
Այդ ի՞նչ արիք: Լիրբ, զնացէք վերցրէք ուելը և  
մաքրեցէք այսուեզ: պատրաստեցէք սեղանը, մո-  
զովեցէք յատակից կտորատնքը և հող... Ոչ դուք  
ինչպէս երեւում է բացի ժաղալարանից ոչ մի տեղ  
չէք ծառայել:

ԲԻԲԻՒԼ. — Մի՞թէ ես ասել եմ որ ծառայել եմ:

ՄԱՐ. ՊԱՎ. — Լուցէ՛ք, Նասարա, Նասարա:

## ՏԵՍԻԼ 10

ՆԱՅԵՐԻ ԵՒ ՆԱՅԵՐԻ

ՆԱՅԵՐԻ. — Ի՞նչ էք հրամայէք:

ՄԱՐ. ՊԱՎ. — Վերցրէք նամակը և ուղարկե-  
ցէք իվան իվանովիչ Բիրիւլինի մօտ... չուտով:

ԲԻԲԻՒԼ. — (ապօած). Ի՞նչ, ի՞նչպէս:

ՆԱՅԵՐԻ. — Շատ բարի. (Բիրիւլ.): Սիրիօն ի-  
գանիչ նայեցէք խանանցին (գնում է):

## ՏԵՍԻԼ 11

ՄԱՐ. ՊԱՎ. ԵՒ ԲԻԲԻՒԼ.

ՄԱՐ. ՊԱՎ. — Ձու, սասակի շոգել եմ, գնամ  
գոնէ պուղրա ցանեմ երեսիս (գնում է):

## ՏԵՍԻԼ 12

ԲԻԲԻՒԼ. ԱՌԱՆՑԻՆ

ԲԻԲԻՒԼ. — Ի՞նձ նամակի: Ոչինչ չեմ հասկա-  
նում, Մի միջոց կայ միայն... փախչել, փախչել  
լինի այդ քրակով բայց փախչել (ուզում է զնալ):

## ՏԵՍԻԼ 13

ԲԻԲԻՒԼ. ԵՒ ՈՒՏՕԶԿԻՆ (բաղրաւենիոն)

ՈՒՏՕԶ. — Ահա քաղցրաւենիքը: Սիր ո՞ւմին եմ  
տեսնում:

ԲԻԲԻՒԼ. — Ուտօչկին:

ՈՒՏՕԶ. — Իվանիչ իվանիչ:

ԲԻԲԻՒԼ. — Ես... ես... ես դուք... դուք...

ՈՒՏՕԶ. — Դուք... դուք... ես... ես...

ԲԻԲԻՒԼ. — (Ծփորուած). Անցնում էի փողո-  
ցով... իմացայ որ դուք էք կարծում էի որ ես  
եմ... դուրս է զալիս որ դուք էք. (կողմը): Աւք  
քրակնը թափեց վրաս:

ՈՒՏՕԶ. — Սիր իվան իվանիչ, որքան ուրախ  
եմ որ եկել էք մեզ մօս, ի դէպս մենք այսօր փոք-  
րիկ երեկոյթ ունենք. մեզ մօս հիւրեք են լինե-  
լու, մենք ձեզ համար վիճա կը սարքինը... իսկ  
կինս ինչպէս կ'ուրախանայ, միշտ խնդրում էր ծա-  
նօթացնել իվան իվանովիչի հետ:

ԲԻԲԻՒԼ. — Ի՞նչպէս, դուք այսօր հիւրեք ու-  
նի՞ք:

ՈՒՏՕԶ. — Այս, մեր ծառայողներն են՝ Պիրե-  
պեռկինը կնոջ հետ, նոքա այնպէս ուրախ կը լի-  
նեն մեզ հետ թողթ խաղալ իվան իվանովիչ: Զէ՞

որ գուշք այնպիսի մի հազուագիւտ հիւր էք... և  
ահա ի՞նչ երջանկութիւն:

ԲԻՐԻԻԼ. — Այս սատանան դիաէ թէ ինչ խոյ-  
առուակութիւն է գուրս գալիս:

ՈՒՅՈԶ. — Դուք իվան իվանովիչ մեր առնը  
եղէք այնպէս ինչպէս ձեր առնը միք քաշուիւ-  
թէ դուք յազնել էք խնդրեմ համեցէք իմ առանձ-  
նասենեակը հանգստանալու: Իվան իվանովիչ,  
դուք ձեր քրակը թողառել էք. թոյլ առեք մաքրեմ:

ԲԻՐԻԻԼ. — Նեղութիւն միք կրիս ոչինչ ես  
ինքս... ես չեմ սիրում նեղութիւն պատճառել ու-  
րիշներին:

ՈՒՅՈԶ. — Դուք, իվան իվանովիչ ոչ ոքին  
նեղութիւն չեք պատճառում... համեցէք իմ առանձ-  
նասենեակը առանց քաշուելու:

ԲԻՐԻԻԼ. — Ծնորհակալ եմ. (կողմը): Պէտք է  
աւելացնել սոճիկը:

ՈՒՅՈԶ. — Համեցէք:

ԲԻՐԻԻԼ. — (կողմը) Այս բողէիս կը փախչեմ  
(գնում է):

## ՏԵՍԻԼ 14

ՈՒՅՈԶԿԻՆ Ա.Ա.Ա.Յ.Չ.Բ.

ՈՒՅՈԶ. — Ախ ինչ բարի և հասարակ մարդ է:  
Արքան զանազանութիւն կայ երբ նա ծոռայու-  
թեան մէջն է և տանը:

## ՏԵՍԻԼ 15

ՈՒՅՈԶ. ԵՒ ՄԱՐ. ՊԱՎԼՈՎ.

ՄԱՐ. ՊԱՎ. — Բերիք վերջապէս քաղցրաւենի-  
քը:

ՈՒՅՈԶ. — Երկու աման, բալի և մորենի:

ՄԱՐ. ՊԱՎ. — Իսկ ես ուզորկեցի... Իվան իվա-  
նովիչին հրաւիրատում:

ՈՒՅՈԶ. — Իվան իվանովիչին: Այդ ասենք  
բոլորովին աւելորդ է:

ՄԱՐ. ՊԱՎ. — Դարձեալ յանդիմանութիւն:  
Դարձեալ գժգսնութիւն:

ՈՒՅՈԶ. — Հաւատացնում եմ քեզ որ աւելորդ  
է... որսվհեան իվան իվանովիչը առանց հրաւի-  
քի էլ... ախ նա այնպէս բարի է, ֆրակով է...  
ինձ ձեռք մեկնեց... այնպէս բարի է:

ՄԱՐ. ՊԱՎ. — Ի՞նչ էք ասում, ի՞նչեր էք  
գուրս ատլիս, ես ոչինչ չեմ հասկանում:

ՈՒՅՈԶ. — Այսաեղ է նա, այսաեղ... ինքն է  
եկել... առանց հրաւէրքի: Ես խնդրեցի ձաշից ա-  
ռաջ նորան հանգստանալ:

ՄԱՐ. ՊԱՎ. — Ի՞նչպէս, իվան իվանովիչը  
այսաեղ է: Այդ անկարելի է. ի՞նչ երջանկութիւն  
իսկ ես այնպէս եմ կարմրել... Բերէք ինձ պուգ-  
րա:

ՈՒՅՈԶ. — Բայց ես կուզէի որ...

ՄԱՐ. ՊԱՎ. — Բերէք ինձ պուգրա:

ՈՒՅՈԶ. — Գնում եմ, գնում... այդ բոլորը  
նրա համար է որ 35 բուրլի եմ սահանում:

## ՏԵՍԻԼ 16.

ՄԱՐ. ՊԱՎ. Ա.Ա.Ա.Զ.Բ.

ՄԱՐ. ՊԱՎ. — Իվան իվանովիչը մեզ մօա է և  
ինչ յարմար ժամանակն է եկել. ես պատուիրել եմ  
ձուտեր և մորենու պաղպաղակ... չորս տեսակ կե-  
րակուր... Սիմին, Սիմին ո՞ւր էք կորել:

## ՏԵՍԻԼ 17.

ՄԱՐ. ՊԱՎ. ԵՒ ԲԻՐԻԻԼԿԻՆ:

ԲԻՐԻԻԼ. — Ուզում էի փախչել... բայց ոչ մի  
գուռ չկար, մի պատուհան էր... այն էլ հաւաբռւ-  
նին էր նայում. (Տեսն. Մար. Պավ.) Դարձեալ նա:

ՄԱՐ. ՊԱՎ. — Սիմին այս ո՞ւր էիք կորել:  
Այս բողէիս հիւրերը պիտի դան, սեղանը պատրաստ  
չէ... ինքնահոը չէ գրուած:



ԲԻՐԻԻԼ.— (կողմը): Այս կինը ինձ խելագաւրութեան կը հասցնի:

ՄԱՅ. ՊԱՎ.— Ի՞նչ էք գերանի նման ցցուել: Ես Նաստիային ուղարկեցի նամակով Բիրիւլկինի մաս:

ԲԻՐԻԻԼ.— Ինձ մօտ:

ՄԱՅ. ՊԱՎ.— Բիրիւլկինի և ոչ թէ ձեզ մօտ

ԲԻՐԻԻԼ.— (կողմը) Աչքերս մթնում են այլեւս ոչինչ չուժ աեւնում:

ՄԱՅ. ՊԱՎ.— Կէս ժամից յետոյ հիւրերը կը հաւաքուն և ոչինչ պատրաստ չէ... Սիմեոն ինչ էք պարապել... գնացէք խոհանոց և տացէք որ ինք նաեւը դնեն... շուտ... շտապեցէք վերջապէս:

ԲԻՐԻԻԼ.— (գնալով) Կ'երթամ խոհանոց և կը կաշառեմ խոհարարունուն:

### ՏԵՍԻԼ 18.

ՄԱՅ. ՊԱՎ. ԱՌԱՆՉԻՒՆ

ՄԱՅ. ՊԱՎ.— Ո՞չ վաղը և եթ գուրս կ'անեմ այս յիմարին: Եւ ինչ ապաւշ եւ զզուելի դէմք ունի... երեսը սափրած առանց բերերի:

### ՏԵՍԻԼ 19.

ՄԱՅ. ՊԱՎ. ԵԽ ՈՒՏՈԶԿԻՆ

ՈՒՏՈԶԿԻՆ.— Ահա քեզ պուդրան, Մանեա: ԱՌ ինչպէս ես կարմրել:

ՄԱՅ. ՊԱՎ.— Ի հարկէ: Այս Սիմեոնը ամենեւին պէտք չէ: Ոչինչ չէ իմանում: Այս բապէիս հիւրերը կը գան, իսկ մեր սեղանը գեռ պատրաստ չէ: և մեղաւորը դուք էք...

ՈՒՏՈԶ.— Ես ի՞նչով եմ մեղաւոր:

ՄԱՅ. ՊԱՎ.— Միշադուք էք մեղաւոր: Օ՛ֆ, ես սաստիկ քրանել եմ. դնամ մի փոքր օդէկոլոնով սրսկուեմ (գնում է):

### ՏԵՍԻԼ 20.

ՈՒՏՈԶԿԻՆ ԱՌԱՆՉԻՒՆ

ՈՒՏՈԶ.— Միշա հս եմ մեղաւորը և այդ միշայն այն պատճառով որ ամսական սատնում եմ 35 րուբլի (նսած է):

### ՏԵՍԻԼ 21.

ՈՒՏՈԶԿԻՆ ԵԽ ԲԻՐԻԻԼԿԻՆ (ԻՆՔՆԱԵԹՈՎ)

ԲԻՐԻԻԼ.— Ո՞չ ես այստեղից չեմ ազատուելու... Անիծեալ խոհարարունին առւեց այս ինքնահուր ձեռքս, փրթկաց, դաները փակեց քթիս առաջ և փախաւ... Այստեղ մի ինչ որ գուանանք է... ամբողջ մի գուանանք (Տեսնելով Աւոչկինին), Բանուեցայք մի իրանց վահում ե իր յիսեւը):

ՈՒՏՈԶ.— Իվան Իվանիչ... Գուրք արդէն վե՞ր էք կացել հանգիստ էիք: Մլուկները չէին արդեօք ձեզ նեղացնում:

ԲԻՐԻԻԼ.— Ոչ, ոչինչ՝ շատ լաւ էր... Այսպէս հանգիստ էի... զալ (բնելով ինինաենը). Ահա, սատանան տանի: մըբաղչ ձեռքս այբուեց:

ՈՒՏՈԶ.— Այդ ի՞նչ է պատահել ձեզ, Իվան Իվանիչ ինքնահու:

ԲԻՐԻԻԼ.— Այս, ինքնահու է և գուրք, Գուրք փուր ես մեռոյ (բնելով ե բազկարսոնին վրայ):

ՈՒՏՈԶ.— Իվան Իվանիչ, գուրք թէ՞յ էք կամ մենում և ինչո՞ւ դուք չըբաւացեցիք:

ԲԻՐԻԻԼ.— Բայց ո՞ւմ, բոլորը ուր որ փախել են... Ազատինը զնացել է նամակով... ծառան տաշնը չէ... ես ուզեցի թէյ, և տհա ես գնացի, իսկ այնահեղ խոհարարունին... և տհա ես այրուեցի...

ՈՒՏՈԶ.— Իվան Իվանիչ, ներկցէք խնդրեմ... այդ բոլորը կինս է, նա է մեղաւորը... այսօր մի ծառայ է վարձել և տանց ինձ, մի ծոյլին, յիմարին, հարրեցողի մէկին... միայն ժողովարաններին է ծառայել, զալ է և ոչ մի բանի պէտք չէ:

Ես ձեզ համար այս բոպէիս բոլորը կը բերեմ և թէյ  
և քաղցրաւենիք տնհոգ կացէք: Այդ բոլորը ծառան  
է մեղաւոր: Այս գողը, հարբեցողը, յիմարը, այն-  
պիսի մի դէմք ունի որ թքել անգամ չես ուզի:  
Այս բոպէիս ես նորան վզին տալով դուրս կ'անեմ  
(գնում է):

## ՏԵՍԻԼ 22.

ԲԻԲԻԽԻԿԻՆ (առանձին)

ԲԻԲԻԽԻԼ: — (րնինուած ձայնով). Իմ կեանքումս  
8 բանկային գրասենեակներ է արագիլ և ես այս-  
պիսի վրդոված չեմ եղել. ի՞նչէս այսմ: Այս ի՞նչ  
է, սատանան տանի: Ես այստեղ ընդամէնը մի կէս  
ժամ է ինչ որ եկել եմ և ինձ ֆրակ են հագցրել.  
Հասմայում են ծաղիկներ տեղափոխել, ինքնանը  
բերել, իսկ այս պարսնը սրը ծառայում է ինձ մօտ  
գրասենեակում և սատանում է միայն 35 բուրի ամ-  
սական, ասում է ինձ, կառավարչին, որ ես գող  
եմ, հարբեցող, յիմար և ուզում է թքել երեսիս:  
Ոչ պէտք է փախչել այստեղից (ուզում է զիալ):

## ՏԵՍԻԼ 23.

ԲԻԲԻԽԻԼ, ԵՒ ՄԱՐԻ ՊԱՎ.

ՄԱՐ. ՊԱՎ. — Այդ ո՞ւր էք գնում... Սպասե-  
ցէք: Ո՞ւր է ինքնանը: Ո՞ւր էք տարել: Ի՞նչու  
սեղանը պատրաստ չէ:

ԲԻԲԻԽԻԼ: — (կողմը). Առ ինձ կը սպանի... Մին-  
չեւ անգամ խօսել չեմ կարողանում:

ՄԱՐ. ՊԱՎ. — Վերջապէս դուք ինձ համբերու-  
թիւնից դուրս կը բերէք: Մի նայեցէք ձեզ վրայ  
ինչի էք նման... մազերը փշաքաղուել, դուք մին-  
չեւ անգամ չէք ածիլուել... Այս բոպէիս գնացէք և  
ածիլուեցէք նաստիան վերադարձել է և կարող է  
տառնց ձեզ սեղան պատրաստել... Դուք միայն կը  
ծառայէք սեղանին:

ԲԻԲԻԽԻԼ: — (կողմը). Ես պիտի ծառայեմ իմ ծա-  
ռայողին, երբեք:

ՄԱՐ. ՊԱՎ. — Գնացէք պարոնի սենեակը, վեր-  
ցրէք ածելին և սափրուեցէք... ապա թէ ոչ ձեր  
երեսը լեղակի գոյն է:  
ԲԻԲԻԽԻԼ: — Ես կարծեմ կը վերցնեմ ածելին և  
կոկորդս կը կարեմ, Այդ է միայն իմ փըր-  
կութեան միջացը:

ՄԱՐ. ՊԱՎ. — Դէ:  
ԲԻԲԻԽԻԼ: — (կողմը). Ինչ արած, պէտք է սա-  
փրուել (գնում է):

## ՏԵՍԻԼ 24.

ՄԱՐ. ՊԱՎ. (առանձին)

ՄԱՐ. ՊԱՎ. — Դուրս, վազ և ետ դուրս կ'ա-  
նեմ... ինչ որ տպաւչ է եղել... յիմար:

## ՏԵՍԻԼ 25

ՄԱՐԻ. ՊԱՎ. ԵՒ ՈՒՏՕԶԿԻՆ (րէլի բաժակը ձեռին)

ՈՒՏՕԶ. — Ուտ և թէյ:

ՄԱՐ. ՊԱՎ. — Դու այդ ո՞րակից, այդ ի՞նչ  
է:

ՈՒՏՕԶ. — Երեւակայիր, իվան իվանիչը ինքն  
ագնացել ինքնանը բերելու, թէյ է ուզեցել խը-  
մել իսկ տանը ոչ ոք չէ եղել... բոլորը փախել են:

ՄԱՐ. ՊԱՎ. — Այդ էր պակաս... իսայանու-  
կութիւն:

ՈՒՏՕԶ. — Դու անյոդ եղիր, ես ամէն բան  
կարգի բերի: Ահա բերել եմ թէյն էլ և քաղցրուե-  
նիքն էլ... բայց ուր է իվան իվանովիչը:

ՄԱՐԻ. ՊԱՎ. — Իսկ ես ինչ գիտեմ, ես նորան  
մինչեւ անգամ դեռ չեմ անել: Ես ամբազչ մամո-  
նակ կովում էի քո ծառայի հեա... շատ չնորհակալ  
եմ, հիանալի ծառայ էք վարձել ինձ համար...:

ՈՒՏՕԶ. — Ե՞ս, ե՞ս եմ վարձել...  
ՄԱՐԻ. ՊԱՎ. — Անտաշ է, կոպիտ, յիմար և  
ոչինչ չը գիտէ, իսկ դուքք, ավերցրու, վերցրու...  
նաստիայի նշանածն է»:

ԱԻՑՈԶ. — Ե՞ս, ե՞ս եմ ասել: Մաքովս անդամ  
չի անցել:  
ՄԱՐ. ՊԱՎ. — Լուցէք, անմիջապէս դռւրս ա-  
բէք նորան և մի ուրիշին վարձեցէք... Ու՞՞ ի՞նչ-  
պէս եմ յօդնել (գնում է):

## ՏԵՍԻԼ 26.

### ԱԻՑՈԶԿԻՆ ԱՐԱՆՁԻՆ

ԱԻՑՈԶ. — Դարձեալ ես եմ յեզաւորը: Չէ ի՞նչ-  
պէս այդ իվան իվանովիչը... երկու տարի ես նո-  
րա մօտ ծառայում եմ և չէի իմանում որ նու այդ-  
պէս թէյ է սիրում:

## ՏԵՍԻԼ 27.

### ԱԻՑՈԶԿԻՆ ԵՒ ԲԻՌԻԼԿԻՆ

ԲԻՌԻԼ. — (ածելին ձեռքին) Ձու, սատանան  
տանի: Անիծեալը այնպէս չանգոտեց երեսը որ...

ԱԻՑՈԶ. — Իվան իվանիչ, այդ ի՞նչ է պատահել  
ձեզ, ձեր երեսը սատանս է:

ԲԻՌԻԼ. — Բանուեցայ: Այս ես ուզում էի  
սակիրուել... Չէ՞ որ դուք հիւրեր ունիք... վերցրի  
այլին, բայց երես չանգոտեցի... Այս ածելի չէ  
այլ ողոց է:

ԱԻՑՈԶ. — Ախ ի՞նչ դժբախառութիւն: Ես այս  
բոսէիս ձեզ համար ջուր և երեսսրբիչ կը բերեմ,  
անհոգ եղէք իվան իվանիչ... Այդ ոչինչ... ես  
խիզյն կը բերեմ (գնում է):

## ՏԵՍԻԼ 28.

### ԲԻՌԻԼԿԻՆ ԱՐԱՆՁԻՆ

ԲԻՌԻԼԿԻՆ. — Վերջապէս ես կարող եմ փախ-  
չել: Ո՞ւր է իմ գրիսրիս: (ուզում է մօտենալ դրո-  
ւերին):

## ՏԵՍԻԼ 29

### ԲԻՌԻԼ ԵՒ ՄԱՐ. ՊԱՎ.

ՄԱՐ. ՊԱՎ. — Վերջապէս գուք պատրաստ  
է՞ք: Սակրուեցի՞ք:

ԲԻՌԻԼ. — Դարձեալ նու, սարսափելի կին է  
աս (հսում է քազմոցի վրայ):

ՄԱՐ. ՊԱՎ. — Այդ ի՞նչ է, ի՞նչպէս էք հո-  
մարձակուում նոտել:

ԲԻՌԻԼ. — Ես չեմ կարող սաքերս ծալւում  
հն:

ՄԱՐ. ՊԱՎ. — Այ յանդուգն... ի՞նչի՞ նման էք,  
ձեր ամբազչ երեսը սապնուտ է... կարել էք երես-  
ներդ ի՞նչ է:

ԲԻՌԻԼ. — Այս ուզում էի ի՞նձ մորթել աի-  
րուհի:

ՄԱՐ. ՊԱՎ. — Այս բոսէիս գնացէք և ձեր այդ  
յիմար դէմքը լուացէք, որ ծառայէք սեղանին:

ԲԻՌԻԼ. — Զայն չեմ հանիլ, լեզուս կապուել է  
(սփռոցով սրբում է երեսը):

ՄԱՐ. ՊԱՎ. — Այդ ի՞նչ էք անում իմ սիրուծ  
սփռոցը:

ԲԻՌԻԼ. — Ես այդ սըրաեկց գէտեմ:

ՄԱՐ. ՊԱՎ. — Դուք սրբու: Այս բոսէիս, ձեր ըստ-  
ուերն անդամ չինի այսանեղ: Աս անտառնելի է:

ԲԻՌԻԼ. — Գնում եմ, գնում... Այդպէս միք  
պսսալ ափրունի... Ես գեռ եւս ի՞նձ չեմ մորթել  
ես գեռ եւս կարող եմ խիստ լի՞նել:

ՄԱՐ. ՊԱՎ. — Զամարձակուէք ի՞նձ հետ կո-  
պիս խօսել: Նաստիա՛: Նաստիա՛:

## ՏԵՍԻԼ 30.

### ՆԱՅՆՔ ԵՒ ՆԱՍՏԻԱ

ՄԱՐ. ՊԱՎ. — Նաստիա, կանչիր այստեղ գրու-  
նապանին: Այս բոսէիս դուրս:

ՆԱՍՏԻԱ. — Ե, ի՞նչ կ'առէք Սիմէօն իվանիչ,  
համեցէք դուրս:

ԲԻՌԻԼ. — Ահա քեզ 5 բուրլի միայն լոիր:

ՆԱՍՏԻԱ. — Հանեցէք ֆրակը, Սիմէօն իվա-  
նիչ:

ՄԱՐ. ՊԱՎ. — Այս... այս... հանեցէք ֆրակը  
և ձեռնոցները:

ԲԻՌԻԼ. — Անհոգ եղէք, հետո չեմ տանիր  
ձերը ի՞նձ ոչ մի բան հարկաւոր չէ:

ՄԱՐ. ՊԱՎ. — Իսկ իրան գուրս... այս բոսէ-  
իս դուրս:

ՆԱՍՏԻԱ. — Հանեցէք, Սիմէօն իվանիչ, խոյ-  
առակուեցար այդ պառաւ տարիքիդ, (հանում է  
ֆրակը):

### ՏԵՍԻԼ 31.

ԱՌՅԱՅԻ ԵՒ ՈՒՏՈՉԿԻՒՆ (բաժակը ձեռքին)

ՈՒՏՈՉ. — Իվան Իվանիչ ահա ջուրը և երես-  
ուրբիչը:

ԲԻԲԻԻԼ. — Կորայ... բոլորը կը բացուի (բնի-  
նում և բազմոցի վրայ):

ՄԱՐ. ՊԱՎ. — Ինչպէս: Այդ ինչ ասաց

ՆԱՍՏԻԱ. — Այ քեզ բան

ՈՒՏՈՉ. — Իվան Իվանովիչ: Դուք ձեզ վաս-  
էք զգում, հանեցէք ձեր բաճկոնակը... Նաստիա  
առուր իմ խալաթը, Մանիչկան ուղարկիր բժշկի յե-  
տեւից, Իվան Իվանիչը ուշքից գնում է: Ուշքի  
եկէք, Իվան Իվանիչ:

ՄԱՐ. ՊԱՎ. — Ուրեմն սա Իվան Իվանովիչն է:

ՈՒՏՈՉ. — Այս, ի հարկէ... իմ մեծաւորը:

ՄԱՐ. ՊԱՎ. — Տէր Աստուած, իսկ ևս նորան  
ծառայի տեզ ընդունեցի:

ՈՒՏՈՉ. — Ինչպէս, Իվան Իվանովիչին ծառա-  
յի ամոց:

ՄԱՐ. ՊԱՎ. — Ես նորան ամբողջ մի ժամ հայ-  
նոյում էի գուրս արի: տէր Աստուած այս ի՞նչ եմ  
արել:

ՈՒՏՈՉ. — Սիրաս, բանեցէք ինձ, Նաստիա  
յուր, Իվան Իվանիչ խղճացէք, ներեցէք, իմ կինս  
յանկութիւնից... ի բնէ հիւանդ... ժառանգական  
է... գորա մեծ մայրը գժանոցումն է:

ՄԱՐ. ՊԱՎ. — Իվան Իվանիչ, ներեցէք: Ես  
ձշմարիտ մեղաւոր չեմ... այս բոլորի պատճառը  
Նաստիան է:

ՆԱՍՏԻԱ. — Ներեցէք պարոն, այդ ես եմ մե-  
զաւորը:

ԲԻԲԻԻԼ. — Գիտեմ, գիտեմ... բայց թանկա-  
գին համբոյր էր:

ՎԱՐԱԳՈՅԹ

ՀՀ Ազգային գրադարան



NL0224790

11254

“ՄԱՍԻՍ”, ԳՐԱՏԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

	Լիվ
1.— Ասուր-Նազիր-Աբալ	Կ. ՄԵԶԵԱՆ
2.— Մեծապատճ Մուրացկանները Յ. ՊԱՐՈՆԵԱՆ	30
3.— “Մասիս”, Տարեգիրք Ա. Տարի Ա. ՍԵՒԱՆ	100
4.— Քանկագին Համբուր (կտկերգ. 1 արար)	10



ՄԱՄՈՒԼԻ ՑԱԿ է

ԳԻՐՈՒԿ ՄԱՐԴՈՒՆ ՀԱՃՈՅՔՆԵՐԸ

Դիմու, ԳՐԱՑՈՒՆ “ՄԱՍԻՍ” — Վ.ԽՈԼԵ 21, Սամբա (Պարլիարժեա)